# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Լաբտեխ Գրուպ ՍՊԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Multiskan SkyHigh Microplate touchscreen + Wellwash Versa 2x8 | Multiskan SkyHigh Microplate touchscreen + Wellwash Versa 2x8 | Multiskan SkyHigh Microplate touchscreen + Wellwash Versa 2x8 | Thermo Fisher Scientific | 1. Բարձր ճշգրտություն և հուսալիություն - Սարքն ունի բարձրորակ օպտիկական համակարգ, որը նվազեցնում է շեղումները և ապահովում է ճշգրիտ արդյունքներ: - Սարքն օգտագործում է ճշգրիտ լուսաբաշխիչ և դետեկտորներ, որոնք ապահովում են կայուն, կրկնելի չափումներ նույնիսկ ցածր կոնցենտրացիաների դեպքում: Ճշգրտությունը համեմատելի է բարձր դասի լաբորատոր սարքավորումների հետ: 2. Օգտագործման հարմարություն - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Ավտոմատ սկանավորում և նմուշների նույնականացում շտրիխ կոդով։ - Վերացնում է մարդկային սխալի գործոնը՝ նմուշների սխալ նույնականացման կամ տեղադրման պարագայում։ - Տաքացման ազդեցության վերահսկում։ Որոշ փորձարկումների ժամանակ նույնիսկ լույսի աղբյուրի ջերմությունը կարող է ազդել արդյունքի վրա։ Նախագծված լինի այդ ռիսկերից խուսափելու համար։ - Պլաստինների ճշգրիտ դիրքավորում։ Սարքի մեխանիկական կառուցվածքը ապահովում է նմուշների ճշգրիտ և վերարտադրելի դիրքավորում ընթերցման ժամանակ։ - Սենսորային էկրանի առկայություն՝ համակարգչից անկախ գործարկման հնարավորությամբ։ - Ներկառուցված ծրագրակազմ՝ ELISA վերլուծության, սպիտակուցների և ԴՆԹ-ի քանակական գնահատում, ստանդարտ կորերի կառուցման և տվյալների մշակման համար։ 3. Լայն ալիքների ընտրություն - Թույլ է տալիս ստանալ տվյալներ լայն ալիքային տիրույթում, ինչը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մեծացնում է վերլուծության ճշգրտությունն ու տարբերակման ունակությունը՝ հատկապես բարդ նմուշների դեպքում։ - Ճառագայթային երկարությունների լայն տիրույթ՝ 200–1000 նմ։ 4. Արագ ընթերցում - 96-պլատային ընթերցում մեկ ալիքի վրա՝ կատարվում է առավելագույնը 6 վայրկյանում: - 384-պլատային ընթերցում մեկ ալիքի վրա՝ կատարվում է առավելագույնը 10 վայրկյանում: - Արագությունն ու տվյալների մշակման արդյունավետությունը բարձր են՝ համեմատած ավելի հին կամ ձեռքով կառավարվող մոդելների հետ։ - Սարքն օգտագործում է մոնոխրոմատորային օպտիկական համակարգ, որը թույլ է տալիս ճշգրիտ ալիքի ընտրություն՝ առանց ֆիլտրերի կարիքի։ Այս հատկությունների շնորհիվ այն հարմար է տարբեր կիրառությունների համար՝ սկսած ELISA թեստերից մինչև սպիտակուցների և ԴՆԹ-ի քանակական գնահատում: 5. Տվյալների պահպանում և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | փոխանցում - Wi-Fi և ամպային կապակցման հնարավորություններ՝ տվյալների կիսման և հեռահար հասանելիության համար։ - Ծրագրային վերահսկողություն (SkanIt software) – Ընդլայնված տվյալների մշակման և համեմատական վերլուծության գործիքներ, որոնք նվազեցնում են սխալ մեկնաբանության հավանականությունը և ապահովում են ստանդարտացված արդյունքներ։ 6. Նորաձև և կոմպակտ դիզայն - Համեմատաբար կոմպակտ է և տեղ է խնայում լաբորատորիայում։ - Ճկուն է տեղադրման հարցում՝ հնարավոր է տեղափոխել տարբեր բաժինների միջև։ - Կաբելների ու միացումների թաքնված դասավորություն։ - Ներկառուցված շտրիխ կոդ սկաներ (կախված տարբերակից)։ - Նմուշների բեռնման դռնակ՝ հստակ սահմանված ուղղությամբ։ - Կոճակների նվազեցված քանակ՝ հպումով կառավարում։ Միջավայրի վերահսկողությունը՝ ինկուբացիա +2-50°C Ֆիլտրի տարողությունը՝ 5 Ֆիլտրի ալիքի երկարության |

միջակայքը՝ 340/400-750 նմ (ABS) Գործիքների կառավարումը՝ Տեղական սենսորային էկրան, համակարգչային ծրագրակազմ Թափահարումը՝ գծային Աջակցվող լաբորատոր սարքավորումներ՝ 6-ից 384-խոռոչային թիթեղներ, 60-, 72-, 96-խոռոչային միկրոթիթեղներ Լվացող սարք 1. Ավտոմատացված ճշգրիտ լվացում - Ըստ փորձի պահանջների ունի հարմարեցվող լվացման արձանագրություններ (Wash Protocols): - Համատեղելի է U- և V-ձև հատակով պլաստինների օգտագործման համար: 2. Պոմպային համակարգի հուսալիություն - Սարքն ունի լուծույթի մատակարարման պոմպ (dispense pump), որը կարևոր է բաղադրիչ է հեղուկի ճշգրիտ մատակարարում ապահովելու համար դեպի յուրաքանչյուր փոսիկ (well)՝ հավասար և վերահսկվող հոսքով: - Պոմպային համակարգի առկայությունը հնարավորություն է տալիս իրականացնել կրկնելի, ճշգրիտ լվացում՝ ապահովելով ավտոմատացված, մաքուր աշխատանքային միջավայր: –

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ЛАБТЕХГРУП в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/12 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | | | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Աշխատում է կարգավորվող հոսքով՝ տարբեր լվացման արձանագրությունների համար։ - Ունի նաև վակուումային համակարգ, որն ապահովում է օգտագործված հեղուկի արդյունավետ հեռացումը։ – Հաջողությամբ աշխատում է U և V-ձև հատակով պլաստինների հետ՝ նվազագույն մնացորդային հեղուկով։ - Սարքն ունի աղբի հայտնաբերման սենսոր (Waste level detection) – Վակուումային հեռացված հեղուկը գնում է թափոնային տարա, որի լցվածությունը վերահսկվում է սենսորով՝ կանխելով արտահոսքը։ 3. Վակուումային ներծծման հուսալիություն (vacuum aspiration) - Հեռացնում է հեղուկը առանց փոսիկը վնասելու - Հնարավոր է կարգավորել ներծծման ժամանակը և խորությունը՝ ըստ պլաստինի տեսակի և արձանագրության - Չի թողնում մնացորդային հեղուկ՝ նպաստում է ELISA-ի ճշգրիտ արդյունքներին - Ունի սենսորներ աղբի վերահսկման համար՝ եթե թափոնային տարան լցված է, սարքը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տեղեկացնում է 4. Ծականի առավելությունները - Ունի հատուկ կառուցվածք. ներարկման և ներծծման մխոցները տեղակայված են կողք կողքի՝ խուսափելու համար շփումից կամ խառնաշփոթից: - Կարգավորվող խորություն՝ թույլ է տալիս ճշգրտել ծականի իջեցման մակարդակը՝ ըստ պլաստինի տիպի (U, V կամ flat) - Հեշտ մաքրում և սպասարկում – Ծականը հնարավոր է մաքրել հատուկ ծրագիրով կամ ձեռքով՝ ըստ կարիքների: 4. Օգտագործման հարմարություն - Ունի օգտագործման ինտերֆեյս: Ինտուիտիվ կառավարման համակարգ՝ LCD էկրանով: - Ունի ներկառուցված վակուումային համակարգ - Աղբի մակարդակի հայտնաբերում (waste detection)՝ լցվածության վերահսկման համար: – Հարմար է ELISA-ի համար, ունի նույն չափերի 96-փոսանոց պլաստինների աջակցություն: – Ապահովում է համատեղելիություն ինչպես տվյալների հոսքի, այնպես էլ մեխանիկական ձևաչափերի մակարդակով, ինչը դարձնում է այն իդեալական լուծում ELISA թեստերի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ամբողջական ավտոմատացման համար, ապահովելով բարձր արդյունավետություն, ժամանակի խնայողություն և տվյալների ճշգրտություն: Գործիքի կառավարում՝ տեղական սենսորային էկրան, համակարգչային ծրագիր Ռեակտիվների քանակը՝ 1-3 Գործընթացներ՝ օպտիմալացված բջջային լվացում Աջակցվող լաբորատոր սարքավորումներ՝ 24-ից 384 խորանարդիկ թիթեղներ Լվացքի/բաշխիչի ընտրանքներ՝ վակուումային ֆիլտրացիա, կենսամագնիսական բաժանում Երաշխիքային ժամկետ 2 տարի: |